ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВОХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР
ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА

CJsC NATIONAL CENTER OF ONCOLOGY
named after V. A. FANARJIAN

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ. 76

ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76

76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

№ 01/10-244
«15» 11 2018թ.

Հեռ.՝ (3741) 28-69-62
Ֆաքս՝ (3741) 28-69-22

ԾԱՆՈՒՑՈՒՄ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/54 ԾԱԾԿԱԳՐՈՎ
<ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ>
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն> ՓԲԸ-ն /այսուհետ նաև՝ Կենտրոն/, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Տանանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, սույնով <<Նյու Ինդասթրիզ>> ՍՊԸ-ին /այսուհետ նաև՝ Ընկերություն/ ծանուցում է հետևյալի մասին.

նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման նպատակով Կենտրոնի և Ընկերություն միջև 2018 թվականի սեպտեմբերի 25-ին կնքվել է ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/54 ծածկագրով պայմանագիր /այսուհետ նաև՝ Պայմանագիր/:

Համաձայն Պայմանագրի 1.1-ին, 1.2-րդ, 3.1-րդ և 7.15-րդ կետերի, Ընկերությունը պարտավորվել է՝ պամանագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից սկսած, քսան օրացույցային օրվա ընթացքում կատարել և Կենտրոնին հանձնել Պայմանագրին կից թիվ 1 հավելվածով նախատեսված՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքները /այսուհետ նաև՝ Աշխատանքներ/:

Պայմանագրով ֆինանսական միջոցները նախատեսվել են 2018 թվականի սեպտեմբերի 28-ին, որի մասին Կենտրոնի և Ընկերության միջև 2018 թվականի սեպտեմբերի 28-ին կնքվել է թիվ 1 համաձայնագիրը:

Վերոգրյալից հետևում է, որ Ընկերությունը Պայմանագրով ստանձնած Աշխատանքների կատարման պարտականությունը պետք է կատարեր և Կենտրոնին հանձներ 2018 թվականի սեպտեմբերի 28-ից սկսած քսան օրացույցային օրվա ընթացքում՝ այսինքն մինչև 2018 թվականի հոկտեմբերի 18-ն ներառյալ: Սակայն մինչև օրս Ընկրերությունը Աշխատանքները չի կատարել և չի հանձնել Կենտրոնին:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Կենտրոնը իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Ընդ որում, Պայմանագրի նույն

կետի բ) ենթակետի համաձայն, Պայմանագիրը համարվում է էական խախտված եթե Ընկերությունը խախտել է աշխատանքների կատարմա ժամկետը:

Այսինքն, եթե Ընկերությունը մինչև 2018 թվականի հոկտեմբերի 18-ն ներառյալ չի կատարում Պայմանագրով ստանձնած Աշխատանքների կատարման պարտականությունը և չի հանձնում Կենտրոնին, ապա Կենտրոնը համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի իրավունք ունի Պայմանագիրը միկողմանի լուծել: Քանի որ Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն Պայմանագիրը համարվում է Ընկերության կողմից էական խախտված:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3-րդ կետով սույնով ծանուցում ենք, որ <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Նյու Ինդասթրիզ>> ՍՊԸ-ի միջև 2018 թվականի սեպտեմբերի 25-ին կնքված ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/54 ծածկագրով նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պայմանագիրը <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ն միակողմանի լուծում է:

Համաձայն ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 33-րդ կետի 16-րդ ենթակետի և Պայմանագրի 7.11-րդ կետի, Պայմանագիրը կհամարվի միկողմանի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու պահից:

Լրացուցիչ տեղեկացնում ենք, որ <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով <<Նյու Ինդասթրիզ>> ՍՊԸ-ի տվյալները ներկայացնելու է լիազոր մարմին: Նաև Ընկերությունը Կենտրոնին պարտավոր է վճարել, պայմանագրի ապահովման նպատակով Ընկերության կողմից միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը:

Հարգանքով

Տնօրեն
պրոֆեսոր Արմեն Տանանյան